



## ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1977 թվականի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 3-ը Քեմթրբերիի արքեպիսկոպոս և համայն Անգլիայի առաջնորդ և միտրոպոլիտ դոկտ. Ֆրենդերիկ Դոնալդ Կոզանը հյուրը եղավ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Օայրագույն Պատրիարքին և կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Անգլիկան համաշխարհային համայնքի հոգևոր պետ Քեմթրբերիի մի արքեպիսկոպոսի առաջին այցելությունն էր այս՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռին ի սուրբ Էջմիածին:

Արքեպիսկոպոսի շքամբին մաս էին կազմում նաև սուրբ Ալբոնգի եպիսկոպոս գերաշնորհ տ. Ռոբերտ Ռանսին: Նորին Գերաշնորհություն արքեպիսկոպոսը և նրա շքախումբը ընդունվեցին Նորին Վեհափառության կողմից, որն այս առթիվ հրավիրել էր Երուսաղեմի հայոց պատրիարք Նորին Ամենապատվություն տ. Եղիշե արքեպիսկոպոսին և Հայաստանյայց Եկեղեցու գլխավոր թեմերի առաջնորդներին աշխարհի բոլոր ծագերից:

Սույն այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետը, Քեմթրբերիի արքեպիսկոպոսը և նրանց պատվիրակություններն ունեցան աստվածաբանական խորհրդակցություններ: Նրանք անդրադարձան երկու եկեղեցիների առաքելական ավանդություններին և նրանց անցյալ պատմությանը: Չորրորդ դարի սկզբին Բրիտանիայի եպիսկոպոսները մասնակցել էին Ալի ժողովին, երբ նույն ժամանակաշրջանում սուրբ Գրիգոր Լուսավորիչը ձեռնարկել էր արդեն հայերին քրիստոնյա դարձնելու ավետարանչական առաքելությանը: Դրանից առաջ, առաջին դարերում, երկու երկրներում էլ անշուշտ գոյություն էին ունեցել քրիստոնեական համայնքներ: Հայերի մեջ քրիստոնեությունը սկիզբ է առնում ս. Թադեոս և ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզությամբ: Հայերը հանդիսացել են քրիստոնեությունն ընդունող առաջին ազգը:

Հետագա դարերում երկու եկեղեցիներն էլ իրենց ժողովուրդների մշակույթի հիմքերը դրեցին:

Հայաստանում հիմնադրող դարում հայկական այբուբենի ստեղծումով և Աստվածաշնչի թարգմանությամբ սուրբ Մեսրոպն ու նրա աշակերտները կերտեցին հայ գրականության ոսկեդարը:

Այսօր երկու եկեղեցիներն էլ անդամներ ունեն՝ ցրված ի սփյուռս աշխարհի:

Անգլիկան համայնքները զարգացան իրենց միսիոնարական տարածումով, հատկապես վերջին երկու և կես դարերի ընթացքում: Հայերը, սակայն, ցրվեցին աշխարհի շորս կողմերը հալածանքների հետևանքով:

Քենթրբերիի արքեպիսկոպոսի այցելության ամենահուզիչ պահը հանդիսացավ ծաղկեպսակի գետեղման արարողությունը և աղոթքը 1915 թվականի ցեղասպանության մեկուկես միլիոն հալ զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշարձանի առջև:

Այժմ քրիստոնյա հայերի մոտ կեսն ապրում է սփյուռքում, սակայն բոլորն էլ սուրբ Էջմիածնին նայում են որպես իրենց հոգևոր Տանը: Եպիսկոպոսական բոլոր ձեռնադրությունները տեղի են ունենում այստեղ: Հավատի ու կարգի վերաբերյալ հարցերի մասին որոշումները նույնպես ընդունվում են այստեղ, եպիսկոպոսների ընդհանուր ժողովի կողմից, կաթողիկոսի գլխավորությամբ, և նրանց որոշումները պարտադիր են Հայաստանյայց եկեղեցու բոլոր համայնքների համար ամենուրեք:

Անգլիկան համայնքների համար Քենթրբերիի արքեպիսկոպոսը «սուաջինն է հավասարների» իր բոլոր եպիսկոպոսների մեջ, սակայն զանազան նահանգներ անկախ են Քենթրբերիից և ինքնավար: Սովորություն է դարձել, որ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ Քենթրբերիի արքեպիսկոպոսը անգլիկան եպիսկոպոսներին հրավիրի Լամբեթի ժողովին: Նորին Գերաշնորհությունն առաջարկեց կաթողիկոսին, որ մի դիտորդ նշանակի Քենթրբերիում 1978 թվականին տեղի ունենալիք սույն ժողովին:

Երկու հին եկեղեցիներն էլ նույնանման հարցերի առջև են գտնվում արդի աշխարհում: Աստվածաշունչը թարգմանվել է արդի անգլերենով և հայերենով: Սուրբ Էջմիածնում լույս են տեսել երկու հրատարակություններ՝ գոհացնելու համար հայերի աճող հետաքրքրությունը: Եկեղեցու երկու պետերը ուրախությամբ հաստատեցին, որ ծեսի վերաքննության հարցի կապակցությամբ իրենց տեսակետները համընկնում են: Պաշտամունքը հավատացյալներին ավելի հասկանալի դարձնելու նրանց ճիգը առաջնորդում է նրանց դեպի նոր գնահատում պաշտամունքային ավանդական հին ձևերի: Ավելին՝ Նորին Վեհափառությունը վստահեցրեց Քենթրբերիի արքեպիսկոպոսին, որ անգլիկան համայնքներում կանանց քահանայական ձեռնադրությունը արգելք չի հանդիսանում երկու եկեղեցիների բարվոք հարստություններին:

Արքեպիսկոպոսն այցելեց նաև հոգևոր ճեմարան, ուր նրան ուղջունեցին տեսուչը, դասախոսական կազմը և ուսանողները: Այնտեղ հիշվեց, որ հալ ուսանողներ հաճախ կատարելագործել են իրենց աստվածաբանական ուսումը անգլիկան ճեմարաններում, և երբեմն էլ անգլիկաններ սովորել և ուսուցչություն են արել հայկական դպրեվանքերում: Ցանկություն հայտնվեց, որ այս փոխհարաբերություններն ավելի զարգանան և ամրապնդվեն աստվածաբանական հարաբերությունների փոխանակությամբ:

Երկու եկեղեցիների միջև հարաբերությունները կարող են զարգանալ նաև նրանց ներկայացուցիչների պարբերական հանդիպումներով՝ աստվածաբանական դիալոգների համար: Գործակցությունն ավելի լայն ձևով կարող է զարգանալ նույնպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի Էկումենիկ մարմիններից ներս, որոնց գործուն անդամներն են երկու եկեղեցիները:

Քենթրբերիի արքեպիսկոպոսն ու Վեհափառ Հայրապետը իրենց հետև-վորդներով միասին աղոթեցին ամեն օր, հատկապես հոկտեմբերի 2-ին, կիրակի օրը, պատարագի ժամանակ, ս. Էջմիածնի Մայր տաճարում:

Էջմիածնի սուրբ Աթոռից և ցեղասպանության ու պատերազմի ավեր-ներից վերածնված Հայաստանից, ուր հավատը ի Քրիստոս Հիսուս դարե-րով կանգուն է պահել ժողովրդին, երկու եկեղեցիների պետերը կոչ են ուղ-ղում աշխարհի բոլոր քրիստոնյաներին մեր Տիրոջ բառերով.

«Չայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխար-հի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխար-հի» (Հովհ. ԺԶ 33):

Աղոթում ենք, որ մարդկությունն ազատագրվի աղքատության, անգրա-գիտության, անարդարության, ցեղասպանության և պատերազմի պատու-հասներից:

Աղոթում ենք նաև, որ խաղաղություն և բարի կամեցողություն տիրեն ամբողջ աշխարհի ժողովուրդների միջև և որ «այսուհետև արդարացեալք ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Հռոմ. Ե 1—2):

ՎԱԶԳԵՆ Ա.

Ծայրագույն Պատրիարք և  
կաթողիկոս Ամենայն Հայոց

ԴՈԿՏ. ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆ

Արքեպիսկոպոս Քենթրբերիի և  
առաջնորդ ու միտրոպոլիտ  
համայն Անգլիայի

3 հոկտեմբերի 1977 թ.,

Ա. Էջմիածին

